ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2025 թվականի N 25-Ն

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2024** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ **26-**Ի **<<**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ **2025** ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**>> N 370-**Ն ՈՐՈՇՄԱՆ **1-**ԻՆ**, 2-**ՐԴ**, 3-**ՐԴ**, 4-**ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾ **5-**Ի ՀԱՄԱՁԱՅՆ **2025** ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ՄՆԱՑՈՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**.**

1. 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Մասիս համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1 277 971 860.60 դրամը և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 317 378 108.90 դրամը ուղղել 2025 թվականի Մասիս համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերին համաձայն հավելված 5-ի /հատված 4 և 5/:

2. 2025 թվականի բյուջեի ֆոնդային մասի մուտքերը և ծախսերն ավելացնել 1 595 349 969 դրամ 50 լումայով:

3. Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 370-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԲԱԲԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՐԱՆՈՍՅԱՆ ԳԵՂԱՆՈՒՇ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱՁԱՐՅԱՆ ՄԵԼԻՔ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ

ՎԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ